ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՊՈՒՆԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Գևորգ Մանթաշյան,

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Հնդկաստանի Հանրապետություն (քաղաք Պունի), 2023թ. հունիսի 11-ից 13-ը:

3. **Հրավիրող կողմը.**

   Հնդկաստանի Հանրապետության (այսուհետ՝ Հնդկաստան) էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարություն:

4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ս.թ. հունիսի 12-ից 13-ը Հնդկաստանում (ք. Պունի) «G20 Digital Economy Working Group» հանդիպման շրջանակում կայացած «Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք» գագաթնաժողովին, ինչպես նաև «ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջև թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրի ստորագրում և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության հետ համագործակցության նոր ուղիների վերհանում:

5. **Քննարկված թեմաները.**

Այցի շրջանակում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության հնարավորությունները, ոլորտային զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու ներուժն ու հեռանկարները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հնդկաստան այցի ընթացքում ս.թ. հունիսի 12-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը մասնակցել է «Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք» գագաթնաժողովի բացման արարողությանը, հանդես եկել ողջույնի խոսքով:

Ս.թ. հունիսի 12-ին Գևորգ Մանթաշյանը հանդիպել է Հնդկաստանի էլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և հմտությունների զարգացման ու ձեռներեցության պետական նախարար Շրի Ռաջև Չանդրասեխարի հետ: Քննարկվել են մի քանի ուղղություններով ռազմավարական համագործակցության հնարավորությունը, մասնավորապես՝

- արհեստական բանականություն,
- քվանտային տեխնոլոգիաներ,
- կիսահաղորդիչների արտադրություն,
- տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնի հիմնում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները համագործակցության օրակարգի և ճանապարհային քարտեզի ձևավորման նպատակով և ընտրել միայն մեկը:

Միջոցառման շրջանակներում Գևորգ Մանթաշյանը հանդիպումներ է ունեցել մի շարք միջազգային խոշոր ընկերությունների, ոլորտային նախարարությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝ «NeGD»-ի նախագահ և գործադիր տնօրեն, «DIC India» ընկերության գործադիր տնօրեն Աբհիշեկ Սինգի, Քենիայի Հանրապետության տեղեկատվության, հաղորդակցության և թվային տնտեսության նախարարության քարտուղար Էլիուդ Օ. Օվալոյի, Տանզանիայի Միացյալ Հանրապետության տեղեկատվության, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության մշտական քարտուղարի տեղակալ Մոհամմեդ Խամիս Աբդուլլայի, «Sahamati» ընկերության համահիմնադիր և գործադիր տնօրեն Բիջի Մահեշի, «GFCE» ընկերության համաշխարհային համագործակցության ղեկավար Վուտեր Վենստրայի, «ONDC» կազմակերպության գործադիր տնօրեն և գլխավոր

գործադիր տնօրեն Տի Կոշինի, «JISA» կազմակերպության գործադիր տնօրեն Իշա Օսվալի, «ISPIRT» ընկերության քաղաքականության իրականացման գործադիր Հարշիտ Կաչոլիայի, «eGov Foundation» ընկերության փոխտնօրեն Անումիտա Ռաջի, «eGov Foundation» ընկերության աճի և գործընկերության փոխնախագահ Վարուն Բասուի, Հնդկաստանի սոցիալական ձեռնարկատեր, «Tiny Monkey Stage» ընկերության հիմնադիր Սուդարշան Մահաջանի և «HDFC» LTD-ի բիզնեսի զարգացման թիմի անդամ Սուրաջ Մորիի հետ:

Քննարկվել են բարձր տեխնոլոգիաների և թվայնացման ոլորտներում երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնման, ոլորտային զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու ներուժն ու հեռանկարները, ինչպես նաև հնդկական ընկերությունների համար Հայաստանի ներդրումային գրավչության բարձրացման, երկու պետություններում գործող ընկերությունների միջև համատեղ ձեռնարկատիրական ներուժի զարգացման և փորձի փոխանակման հնարավորությունները:

Ս.թ. հունիսի 12-ին «Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք» գագաթնաժողովի շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հարցազրույց է ունեցել Հնդկաստանում գործող «DD India» պետական լրատվական ծառայության, ինչպես նաև «ANI South Asia's leading Multimedia News Agency» լրատվական գործակալության հետ: Հարցազրույցում Գևորգ Մանթաշյանն ընդգծել է երկու պետությունների միջև համագործակցության կարևորությունը, ներկայացրել ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակում փոխգործակցության հնարավորությունները, շեշտել թվային հանրային ենթակառուցվածքի (DPI) ոլորտում Հնդկաստանի հաջողված փորձի փոխանակման անհրաժեշտությունը:

«Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք» գագաթնաժողովի շրջանակում ս.թ. հունիսի 13-ին Գևորգ Մանթաշյանը, որպես նախագահող մասնակցել է «Թվային փաստաթղթերի փոխանակում արդյունավետ ծառայությունների մատուցման համար» պանելային քննարկմանը, ներկայացրել պետության գործառույթները թվային փոխակերպման իրականացման գործընթացում: Ընդգծվել է թվայնացման ոլորտում պետությունների միջև փորձի փոխանակման կարևորությունը, թվային փոխակերպման, տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ս.թ. հունիսի 12-ին Հնդկաստանում (ք. Պունի) կայացած «Գլոբալ թվային հանրային ենթակառուցվածք» գագաթնաժողովի շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հնդկաստանի Հանրապետության էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջև ստորագրվել է «Թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր:

Հուշագիրը ստորագրել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը և Հնդկաստանի Հանրապետության էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության գլխավոր քարտուղար Ալկեշ Կումար Շարման: Համաձայն հուշագրի՝ կողմերն արտահայտում են իրենց պատրաստակամությունը՝ ընդլայնելու համագործակցությունը երկու երկրների միջև ինստիտուցիոնալ համագործակցության խթանման, տեխնիկատնտեսական հիմնավորման, արդիականացման գնահատման և թվային փոխակերպման լուծումների իրականացման ոլորտներում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

19.06.2023թ.